



**Burbank Unified School District**  
Superintendent's Office  
1900 W. Olive Avenue  
Burbank, CA 91506  
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

**Board of Education**  
Dr. Armond Aghakhanian, President  
Steve Frintner, Vice President  
Charlene Tabet, Clerk  
Steve Ferguson  
Dr. Roberta Reynolds

**Superintendent**  
Matt Hill, Ed.D.

8-13-2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Մենք անհամբերությամբ ենք սպասում ուսումնական տարվա առաջին օրվան, որը կկայանա երկուշաբթի, օգոստոսի 17-ին: Դպրոցները բացվելուն պես, դուք տեղեկություն կստանաք ձեր դպրոցի ուսուցիչներից և տնօրենից, որի պատճառով ապագա մի քանի շաբաթների ընթացքում դուք նորությունների հաղորդագրություն չեք ստանա գերատեսչի կողմից: Այնուամենայնիվ, ես կտեղեկացնեմ ձեզ, երբ նորություն ունենամ:

Պլանավորելով նոր ուսումնական տարին, որը նման չէ անցած տարիներին, մեր ուշադրության կենտրոնում է լինելու «գերազանցությունն ու հավասարությունը», որը կտրամադրենք մեր աշակերտներին, ծնողներին և աշխատակիցներին: Բրբենքի դպրոցների շրջանում, մենք ձգտում ենք ամեն օր ապահովել յուրաքանչյուր երեխայի կրթական միջավայրը, մարտահրավեր նետել նոր փորձ ձեռք բերելու համար և առաջնորդվել գիտական փորձով և աջակցությամբ:

Կորոնավիրուսի (COVID-19) համաճարակը սպիպեց բոլորիս մշակել կրթական նոր մոդել: Մենք մեծապես գնահատում ենք մեր աշխատակիցների նվիրվածությունն ու փորձը, աշակերտների ճկունությունը և ծնողների համագործակցությունը: Բրբենքը հատուկ տեղ է և մենք երջանիկ ենք, որ հնարավորություն ունենք կրթելու ապագայի առաջնորդներին այդպիսի հոգատար համայնքում:

Դպրոցական շրջանը չորս կոմիտե էր ստեղծել՝ բաղկացած ծնողներից, աշակերտներից, աշխատակիցներից և կրթական գրասենյակի անդամներից, աշնանը դպրոցների բացելու աշխատանքները ստանձնելու համար. (1) դասավանդում, (2) սոցիալ-հուզական բարեկեցություն, (3) ընտանիքների և համայնքի ներգրավվածություն և (4) գործադիր, առողջապահություն և անվտանգություն: Թեև որոշում կայացվեց սկսել ուսումնական տարին հեռակա կրթության եղանակով, մենք բոլորս անհամբերությամբ ենք սպասում անձամբ դպրոց վերադառնալուն, երբ այն հնարավոր կլինի:

Ես հավատում եմ, որ Բրբենքի դպրոցական շրջանը յուրովի դիրքավորված է կառուցել մեր գերազանցության ու հավասարության համբավը՝ միաժամանակ համագործակցելով տեղական պաշտոնյաների, մեր օժանդակ գործարար համայնքի և Բրբենքի PTA կոմիտեի նվիրված և աշխատասեր անդամների հետ՝ աշակերտներին կրթական հաջողություններ տրամադրելու համար:

**Տեխնոլոգիական աջակցության համացանցային երեկո (Webinars) ընտանիքների համար՝ անգլերեն, իսպաներեն և հայոց լեզուներով.** Երեքշաբթի օրը, օգոստոսի 18-ին, երեկոյան ժամը 6:30-ից մինչև 7:30, Ուսուցողական ծառայությունների բաժինը կներկայացնի համացանցային երեկո անգլերեն լեզվով տարրական դպրոցի ընտանիքների համար, ովքեր ցանկանում են ծանոթանալ, թե ինչպես օգնել երեխաներին տանը: Այն նույն օրը երեկոյան ժամը 8-ից 9-ը տեղի կունենա հանդիպում միջնակարգ դպրոցի ընտանիքների համար: Այս նույն հանդիպումը կկրկնվի օգոստոսի 19-ին, երեկոյան ժամը 7-ից 8-ը իսպաներեն լեզվով, իսկ օգոստոսի 20-ին, նույն ժամին՝ հայոց լեզվով: Խնդրում ենք սեղմել [այստեղ](#) տեղեկություն և հղում ստանալու համար: Մենք կունենանք աջակցող տեսաժապավեններ, կօգնենք ծնողներին նավարկել տեխնիկական աջակցության դասընթացների միջով և պատասխանել հուզող հարցերին: Ծնողներին հասանելի նյութերը տեղադրված կլինեն [այստեղ](#):

Ամենավերջին նորությունների հետ կարելի է ծանոթանալ այս կայքում.

<https://www.burbankusd.org/Reopening>. Հաճախակի տրվող հարցերի (FAQs) հետ կարելի է ծանոթանալ այս կայքում. <https://www.burbankusd.org/reopeningfaqs>.

Ձեր առաջարկները կարող եք ուղարկել [re-opening@burbankusd.org](mailto:re-opening@burbankusd.org) հասցեին: Խնդրում ենք նշել, որ դպրոցները բացելու հետ կապված բոլոր նյութերը տեղադրված են մեր կայքում անգլերեն, իսպաներեն և հայոց լեզուներով: Ահա մեր կայքը. <https://www.burbankusd.org/Reopening>.

Կորոնավիրուսի հետ կապված, գերատեսչի նախորդ շաբաթների նորությունների հետ կարելի է ծանոթանալ այս կայքում. <https://www.burbankusd.org/COVID-19>

Աշխատելով միասին, մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն:

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Հիլլ

Գերատեսուչ